Հաղորդում

«Փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման դեմ պայքարի հարցերով» միջգերատեսչական հանձնաժողովի 35-37-րդ նիստերի վերաբերյալ

(2020-2022թթ.)

2020-2022թթ. ժամանակահատվածում գումարվել է «Փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման դեմ պայքարի հարցերով» միջգերատեսչական հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) երեք նիստ, որոնց ընթացքում, ի թիվս այլ հարցերի, քննարկվել և համաձայնեցվել են փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման (այսուհետ՝ ՓԼ/ԱՖ) դեմ պայքարին վերաբերող հիշատակման արժանի հետևյալ հարցերը.

1. ***Լիազոր մարմնի կողմից հրապարակվող ահաբեկչության հետ կապված անձանց ցանկում ներառման վերաբերյալ*** – Հիմք ընդունելով «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետը և ՀՀ կենտրոնական բանկի նախագահի 2018թ. հունիսի 26-ի թիվ 1/434Ա որոշմամբ հաստատված «Միավորված ազգերի կազմակերպության անվտանգության խորհրդի բանաձևերով կամ դրանց համաձայն հրապարակված ցանկերում, օտարերկրյա ազգային ցանկերում անձանց կամ կազմակերպություններին ներառելու կամ այդպիսի ցանկերից հանելու առաջարկի ներկայացման, Լիազոր մարմնի կողմից հրապարակվող ցանկերում անձանց կամ կազմակերպությունների ներառման կարգ»-ի 9-րդ կետը՝ Ֆինանսական դիտարկումների կենտրոնը հավաքել է տեղեկություններ 2020 թվականի սեպտեմբերի 27-ին սկսված պատերազմական գործողությունների շրջանակում Թուրքիայի օժանդակությամբ հավաքագրված և Ադրբեջանի տարածք տեղափոխված անձանց վերաբերյալ (այդ թվում՝ նրանցից որոշների նույնականացման տվյալների մասով): Կազմված ցանկերը և դրանց հրապարակման իրավական ու փաստական հիմնավորումները ներկայացվել են Հանձնաժողովի քննարկմանը: Միավորված ազգերի կազմակերպության անվտանգության խորհրդի 1373 բանաձևի համաձայն կազմված՝ ահաբեկչության հետ կապված անձանց ցանկը հաստատվել է Հանձնաժողովի 35-րդ և լրամշակվել Հանձնաժողովի 36-րդ նիստերում: Լիազոր մարմնի՝ ահաբեկչության հետ կապված անձանց ցանկը հրապարակվել է ՀՀ կենտրոնական բանկի պաշտոնական կայքում:[1]

2. ***2017-2020թթ. ռիսկերի ազգային գնահատման հաշվետվությունների վերաբերյալ*** – 2020թ. սկսված և 2021թ. ամփոփված ՓԼ/ԱՖ և զանգվածային

[1] Հղումը՝ www.cba.am/Storage/EN/FDK/20211021%20-%20National%20Designations%20List_arm.pdf

ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման (այսուհետ՝ ՋՈՋ ՏՖ) ռիսկերի ազգային գնահատման արդյունքում մշակվել են երկու՝ «*2017-2020թթ. Հայաստանի Հանրապետությունում փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման ռիսկերի ազգային գնահատման հաշվետվություն*» և «*2017-2020թթ. Հայաստանի Հանրապետությունում զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման ռիսկերի ազգային գնահատման հաշվետվություն*» փաստաթղթերի նախագծերը:[2] ՀՀ-ում ՓԼ/ԱՖ ռիսկերի ազգային գնահատումներ իրականացվել են 2010-2013թթ. և 2014-2016թթ. ժամանակահատվածների համար, իսկ ՋՈՋ ՏՖ ռիսկերի ազգային գնահատում իրականացվել է առաջին անգամ: Հաշվետվությունների նախագծերը քննարկվել են և հաստատվել Հանձնաժողովի 36-րդ նիստում:

3. *«Փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում 2022-2024թթ. ազգային ռազմավարություն»* – Հանձնաժողովում քննարկվել և հաստատվել է «Փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում 2022-2024թթ. ազգային ռազմավարության» նախագիծը: Նախագծի առաջին և երկրորդ հավելվածներով համապատասխանաբար սահմանվում են ՓԼ/ԱՖ/ՋՈՋ ՏՖ դեմ պայքարի ոլորտում 2022-2024թթ. ազգային ռազմավարությունը և դրա իրագործման գործողությունների ծրագիրը, ինչպես նաև գործողությունների ծրագրով նախանշված միջոցառումների նկատմամբ մոնիտորինգի իրականացման գործիքը: Գործողությունների մոնիտորինգ նախատեսվում է իրականացնել կիսամյակային պարբերականությամբ, որի արդյունքները ներկայացվելու են Հանձնաժողովին:

[2] Հաշվետվությունների հիմնական եզրահանգումները հասանելի են հետևյալ հղմամբ՝ www.cba.am/am/SitePages/FMCNewsDetails.aspx?NewsID=602